ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան՝

Ի պատասխան Ձեր՝ 20.02.2018թ. հ.Ե-1/191 գրության, տեղեկացվում է.

Գ.Նժդեհի փողոցի և Արշակունյաց պողոտայի հատման մասի ստորգետնյա անցումի լուսավորության ապահովումն իրականացվում է «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից, իսկ սանիտարական վիճակի ապահովումը՝ «Սանիթեք» ՍՊԸ-ի կողմից: Վերոնշյալ աշխատանքների նկատմամբ Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների կողմից իրականացվում է հսկողություն և շրջայցերի ընթացքում հայտնաբերված թերությունները սեղմ ժամկետներում վերացվում են սպասարկող համապատասխան ընկերությունների կողմից:

Գ. Նժդեհի փողոցի և Արշակունյաց պողոտայի հատման մասի ստորգետնյա անցումի վնասված լուսատուները վերանորոգվել են, և անցումը գտնվում է պատշաճ սանիտարական վիճակում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ